

ԲԱՐԴ ԲԱՌԵՐԻ ԵՎ ԴԱՐՉՎԱԾՔՆԵՐԻ
ԿԻՐԱՌՈՒԹՅՈՒՆԸ ԽՈՍԱԿՑԱԿԱՆ ԼԵԶՎՈՒՄ

Հայերենը հարուստ բառապաշար ունի: Սակայն բառերի այդ մեծ քանակը խոսքում հավասարապես չի կիրառվում: Կան բառերի գործուն և ոչ գործուն շերտեր, որոնք իրենց կիրառության որոշակի ոլորտներն ունեն: Որոշ բառեր լեզվում ավելի շատ են գործածվում, իսկ մի մասի կիրառությունը խիստ նեղ է: Սակայն հայոց լեզուն որքան էլ հարուստ բառապաշար ունենա, միևնույն է, բառաստեղծման գործընթացը երբեք կանգ չի առնում. դա պայմանավորված է հասարակական կյանքի առաջընթացով, որը պարտադրում է նոր բառերի ստեղծում: Նոր բառերի առաջացման տարբեր եղանակներ կան, սակայն մենք կխոսենք դրանցից մի քանիսի, մասնավորապես խոսակցական լեզվում բարդ բառերի առաջացման և դրանց կիրառության մասին:

Բառաբարդումը՝ որպես բառակազմական հիմնական եղանակ, մեծ նշանակություն ունի հայերենի բառապաշարի հարստացման գործում: Ինչպես ընդունված է լեզվաբանության մեջ, հայերենի բարդությունները լինում են վերլուծական և համադրական՝ իրենց տարատեսակներով:

Վերլուծական բարդությունները հայերենում լայնորեն տարածված և զարգացող խումբ են: Դրանք կազմվում են հարադրության հիմունքով կա՛մ արմատի կրկնությամբ, կա՛մ ու (երբեմն՝ և) համադասական շաղկապներով կապվող տարբեր բառերով, կա՛մ որևէ բառի և բայի հարադրությամբ և այլ ձևերով: Այս բարդությունները լայնորեն կիրառվում են խոսակցական լեզվում և նրա հիմնական բառապաշարի կարևոր շերտերից են, որոնք լեզվին հաղորդում են ազգային երանգ՝ դարձնելով այն առավել պատկերավոր և գունեղ:

Ամբան գառները մութ ծորի միջին

Խաղ էին կանչում ու ձենով լալիս,

Սարոյի նանն էլ նըրանց առաջին

Աղլուխ էր առել ու *պար էր գալիս*:

(ՀԹ, հ1, էջ 211)

Վերլուծական բարդությունների տարատեսակ են կրկնավոր բարդությունները, որոնցից տարածված են ածականներով կազմված կրկնավորները, որոնք սաստկացնում են բառիմաստը: Օր.՝ սև-սև, մութ-մութ, ալվան-ալվան և այլն:

Փնտրում է ծաղկած ափերը *հին-հին*

Ու գոռում *գիժ-գիժ*... (ՀԹ, հ1, էջ 172)

Անց ենք լուսնում մեր *սև-սև* օրերը... (ՀԹ, հ1, էջ 181)

Այլ խոսքի մասերի կրկնությամբ ևս ունենք շատ բարդություններ, ինչպես՝ փունջ-փունջ (գոյականի կրկնությունից բառը ածականական իմաստ է ստացել, ինչպես՝ փունջ-փունջ աղջիկներ), փողոց-փողոց, մեկ-մեկ և այլն:

Խոսակցական լեզվում շատ են հանդիպում այնպիսի կրկնավոր բարդություններ, որոնցում բաղադրիչներից մեկը հնչյունափոխվում է, կամ նոր հնչյուն է ավելանում՝ ընդարձակելով բառի նշանակությունը, իր մեջ ներառելով նման այլ առարկաների իմաստներ և փաղաքշական, ինչպես նաև արհամարհական երանգ հաղորդելով բառիմաստին:

Հնչյունափոխությամբ առաջացած կրկնավոր բարդություններ.

մանր-մունր, քիչ-միչ, կնիկ-մնիկ, խունջիկ- մունջիկ, փալաս- փուլուս:
Հնչյունի ավելացումով կազմված կրկնավոր բարդություններ.

աման-չաման, մազ- չմազ, ավել- մավել:

Այս շարքը կարելի է անվերջորեն շարունակել, քանի որ այս ճանապարհով կրկնավոր բարդություններ ստանալը խիստ կենսունակ է, և խոսակցության պահին իսկ կարող են այս ձևով նոր բառեր ստեղծվել՝ կրելով անհատական բնույթ:

Հայոց լեզուն հարուստ է նաև ու շաղկապով կազմված հարադրություններով՝ բաղիյուսական բարդություններով, որոնք կազմվում են ինքնուրույն, առանձին գործածություն ունեցող բառերի հարադրությամբ և այդ պատճառով իրոք հարադրական բարդության մի տեսակ են, որոնք, ինչպես նշվեց վերևում, հատկանշվում են այն առանձնահատկությամբ, որ հարադրվող բաղադրիչներն իրար հետ կապվում են ու (երբեմն՝ և) համադասական շաղկապով, ինչպես օրինակ՝ գունդ ու կոփիկ, լաց ու կոծ, հարց ու պատասխան, ծաղր ու ծանակ և այլն: Փաստորեն, հայերենում ու համադասական շաղկապը ոչ միայն կապում է նախադասության համագոր անդամները կամ համագոր նախադասությունները, այլև բառակազմական որոշակի դեր է կատարում՝ իրար հետ կապելով հարադրական բազմազան բնույթի բառեր, և կազմում իրենց յուրահատուկ ոճաբանական արժեքն ու կիրառությունն ունեցող բաղիյուսական բարդություններ, որոնք բառին հաղորդում են հոգնակիության և հավաքականության իմաստ: Օրինակ՝ Սև ու սուզ լինի թագ ու պնսակըղ (ԴԶ, հ1, էջ 209):

Վերլուծական բարդությունների մյուս մեծ խումբը բայական հարադրություններն են, որոնց մեջ իրենց կշիռն ու դերն ունեն հարադրավոր բայերը: Հայերենում հարադրավոր բայերի կազմությանը մասնակցում են ամենատարբեր բայեր, ինչպես՝ անել, լինել, գալ, տալ, բերել, գցել, առնել, ածել և այլն:

Հարադրավոր բայերի մասին խոսելիս նախևառաջ պետք է նշել այն, որ դրանք ծագումով խորապես ժողովրդախոսակցական ձևեր են և, որպես կանոն, ունեն իրենց հոմանիշները գրական լեզվում:

Օրինակ՝ պար գալ- պարել, վեր կենալ- կանգնել, արթնանալ, աչք ածել- նայել, զննել, միտք անել- մտածել, զրույց անել- զրուցել:

Ինչպես երևում է օրինակներից, հարադրավոր բայերի մի մասի հոմանիշները նույնարմատ են, ինչպես՝ պար գալ- պարել, միտք անել- մտածել, իսկ որոշները նույնարմատ հոմանիշներ չունեն: Սա ապացուցում է այն փաստը, որ հարադրավոր բայերն իրենց կիրառությամբ խիստ տարածված են համագործածական լեզվում, և ամբողջ գրական լեզվում հոմանիշներ ունենալու դեպքում նրանք անփոխարինելի են և իրենց յուրահատուկ տեղն ունեն հայերենի բառապաշարում: Ավելացնենք, որ այս բայերը լայնորեն կիրառվում են բարբառներում, իսկ շատերն առաջացել են հենց բարբառներում՝ այնտեղից անցնելով խոսակցական, այնուհետև՝ գրական լեզուներին:

Հարադրավոր բայերի կիրառությունը լայնորեն տարածված է նաև գեղարվեստական գրականության մեջ: Սա հասկանալի է, որովհետև երբ խոսքը ժողովրդի նիստուկացի, բարբերի և սովորույթների մասին է, առանց հարադրավոր բայերի անհնարին կլինի ներկայացնել ժողովրդական մտածողության նրբերանգները, ստեղծել ազգային կոլորիտը պատկերող տեսարաններ:

Այսպես՝

Տես, ինչ ուրախ *պար ենք գալի,*

Սիրուն- քահել հարսն- աղջիկ:

Ո՞վ է մեղավոր: *Միտք եմ անում,* միտք,

Ու չեմ հասկանում ով է մեղավոր... (ՀԹ, հ1, էջ 188)

Անցնելով համադրական բարդությունների (կցական, հոդակապով և անհոդակապ բարդություններ) ուսումնասիրությանը՝ պետք է նշել, որ սրանք գրական լեզվին բնորոշ բառապաշարային շերտեր են և առավելապես առաջացել են գրավոր խոսքում: Իսկ խոսակցական լեզվում խոսողը նախապատվությունը տալիս է բառերի պարզ կամ հարադրավոր ձևերին: Օրինակ՝ այսպես, այդպես, այնպես ցուցական դերանունների փոխարեն հաճախ լսելի են ըսենց, ըտենց, ընենց ձևերը, որտեղ բառերի պարզեցման միտում է նկատվում:

Բանավոր խոսքում քիչ են հանդիպում, ասենք, հեռախոսազանգ, ազգադավ, բազմերանգ, բարակիրան, էժանագին, անտառամերձ և այլ բարդություններ: Սրանց փոխարեն օգտագործվում են հեռախոսի զանգ, ազգի դավաճան, տարբեր գույների, բարակ մեջքով, շատ էժան, անտառին մոտիկ (լրացում+լրացյալ) ձևերը: Սակայն չենք կարող ժխտել, որ կան նաև շատ համադրական բարդություններ, որոնք գործածական են և՛ գրական, և՛ խոսակցական լեզուներում: Ինչպես օրինակ՝ յամացույց, գրատախտակ, տամտեր, հորաքույր (հոր-

քուր), մորաքույր (մորքուր), ձկնորս, առևտուր կամ առուտուր, շրջապատ, ծրագիր, պատուհան, ծաղկաման և շատ այլ բարդ բառեր, որոնք պարզապես հոմանիշներ չունեն խոսակցական լեզվում:

Խոսակցական լեզվում տարածված են նաև կցական բարդությունները, առավելապես արմատի կրկնությամբ ստեղծված բազմապատկական բայերը, որոնք կոչվում են նաև կրկնական բարդություններ և, ի տարբերություն կրկնավոր բարդությունների, որոնց բաղադրիչները գրվում են անջատ, սրանց բաղադրիչները գրվում են միասին: Օր.՝ փայլփլել, վազվզել, ձգձգել, խնդմնդալ:

Ինչպես նշվեց վերևում, կա բառերի մի ստվար զանգված, որ ավելի կիրառելի է բանավոր խոսքում և կազմում է խոսակցական լեզվի հիմնական շերտերից մեկը: Այս առումով մեծ հետաքրքրություն են ներկայացնում դարձվածքները, որոնց կարելի է համարել խոսակցական լեզվի ատաղձը:

Իսկապես, խոսակցական լեզվի բառապաշարի ամենաբնորոշ շերտերից մեկը դարձվածաբանությունն է: Ոչ մի լեզվական ոճ, նույնիսկ գեղարվեստականը, այնքան հարուստ չէ դարձվածքներով, որքան խոսակցականը: Դրանք ժողովրդի պատկերավոր մտածելակերպի, վառ երևակայության արդյունք են, բառերի այնպիսի կայուն կապակցություններ, որոնց բաղադրիչները, գրկվելով իրենց բուն իմաստից, միասնաբար նոր, փոխաբերական-այլաբանական իմաստ են արտահայտում: Ինչպես նշվեց, դրանց գործածությունը լայն է նաև գեղարվեստական գրականության մեջ, այս փաստը իր հիմնավորումն ու պատճառներն ունի. հայ գրականությունը մեծ քանակությամբ գեղարվեստական երկեր ունի՝ նվիրված հայ գյուղին, գյուղական միջավայրին և, ընդհանրապես, հայկական սովորույթներին, ծեսերին: Օրինակ.

- Աղջի, Վարդիշաղ, թե *հոգիդ սիրես*,

Մի գարիդ գցիր, տես ի՞նչ է ասում,

Աչքս խավարի, տեսիլ դառնամ ես,-

Տեսիլք եմ տեսել գիշերս երազում: (ՀԹ, հ1, էջ 210)

Գըլուխն առավ, քարերն ընկավ,

Իմ ծաղիկըս, իմ լալես... (Ավ. Իս., երկեր, էջ 85)

Բանավոր խոսքում դարձվածքները գործածվում են առավելապես անկաշկանդ գրույցի, ոչ պաշտոնական երկխոսությունների ժամանակ:

Ինչպես գիտենք, հայերենում սովորաբար տարբերակվում են անվանական և բայական դարձվածքներ՝ ելնելով նրանց ձևաբանական կառուցվածքից (նախած, թե վերջին, գլխավոր բաղադրիչն ինչ խոսքի մասով է արտահայտված):

Անվանական դարձվածքները կազմվում են գոյականով, ածականով, դերանունով, թվականով, որոշ դերբայներով, շատ դեպքերում դրանց կազմությանը մասնակցում են կապեր, շաղկապներ, ծայնարկություններ:

Պետք է նկատել, որ այս խոսքի մասերով կազմված դարձվածքներից առավել գործածական են գոյականով, ածականով, որոշ դերբայներով (հարակատար, ենթակայական դերբայներ) կազմված դարձվածքները:

ա. Գոյականով. գայլի ախորժակ, աչքի փուշ, շուն ու գելի բաժին, Նոր տարվա լիմոնադ, յոթերորդ երկինք, հալած յուղ, կարծ ուղեղով, խելքի ծով և այլն:

բ. Ածականով. միտքը ծուռ, խելքը կարծ, վիզը ծուռ, գլուխը դատարկ, խելքից պակաս, ծալը պակաս, սիրտը սև և այլն:

գ. Դերբայով. աչք մտնող, աչք ծակող, խելքը թոցրած, սիրտը շահող և այլն:

դ. Կապով ձևավորված կապակցություններ, ինչպես՝ շան մման, ձեռքի տակ, հոգու վրա, գլխից դուրս և այլն:

Սակայն պետք է նկատել, որ հայերենի դարձվածքների մեծ մասի գլխավոր բաղադրիչը արտահայտված է բայով: Եվ պետք է ասել, որ գրական և խոսակցական լեզուներում առավել տարածված և լայնորեն կիրառվում են բայական դարձվածքները: Դա պայմանավորված է այն հանգամանքով, որ բայը առավել ազատորեն և բազմաթիվ կապակցման ձևեր ու եղանակներ ունի նյութական խոսքի մասերի հետ: Հայերենում կան բայեր, որոնք մեծ քանակությամբ դարձվածքների բաղադրիչ են դառնում, ինչպես՝ անել, տալ, գալ, ասել, առնել, գալ, դնել և այլ բայեր: Այսինքն, կան դարձվածքներ կազմող գործուն և ոչ գործուն բայ-բաղադրիչներ: Օրինակ՝ օրը սև անել, սև սուգ անել, իրենով անել. երես տալ, գլխին տալ, հոգին տալ, խոսք տալ. խելքի գալ, ուշքի գալ, դարձի գալ. աչքի առաջ ունենալ, սիրտ ունենալ. սիրտ առնել, երես առնել, ձեռք առնել, հոգին առնել. աչք դնել, ականջ դնել, ոտք դնել:

Երեք թագավոր, ասում են իբրև,

խելքս չի կտրում, որ էսպես լինի,

խորհուրդ են արել, որ այսուհետև

իւր *թախտից զրկվի*, ով կռիվ անի: (ՀԹ, հ1, էջ 185)

Սրան զուգահեռ կան բայեր, որոնք մեկ-երկու դարձվածքային բառակապակցություններում են հանդիպում: Օրինակ՝ շան լափ *թափել*, շնից մազ *պոկել*, հոգու հետ *խաղալ*, կանաչները *սրել*, լուն ուղտ *շինել*, գլուխը *կորցնել*, սիրտը *շահել*, երես *դարձնել*, երես *թեքել* և այլն:

Ինչպես երևում է օրինակներից, դարձվածքների մեջ շատ են հանդիպում հոմանիշ ձևեր: Այս երևույթը մեկ անգամ ևս ցույց է տալիս նրանց առատությունն ու բազմազանությունը համագործածական բառապաշարում, ժողովրդի ազգային լեզվամտածողությունը, խոսքը պատկերավոր և առավել տպավորիչ դարձնելու ձգտումը: Օրինակ՝ խելքից պակաս- խելքը կարծ. խելքի գալ- խելքը

գլուխը հավաքել. հոգին տալ- սիրտը դնել. լույս ուղտ շինել- մազը գերան սարքել. հոգին ավանդել- ոտքերը ձգել- շունչը փչել:

Հայերենում հանդիպում են մաս համանուն դարձվածքներ (երբ միևնույն դարձվածքը տարբեր իմաստներ կարող է արտահայտել): Այսպես՝ գլխին տալ դարձվածքն ունի երկու նշանակություն: Մի դեպքում նշանակում է փոշմանել, ափսոսել (Հայրը գլխին էր տալիս, բայց արդեն ուշ էր:), մյուս դեպքում՝ հարբել (Գինին գլխին էր տվել):

Հայերենի դարձվածքները հիմնականում ունեն մաս իրենց հոմանիշ ձևերը գրական լեզվում: Դա մեկ անգամ ևս ապացուցում է այն փաստը, որ դարձվածքներն օգտագործվում են ոչ թե լեզվում այլ տարբերակներ չունենալու, այլ խոսքը հյութալի և պատկերավոր դարձնելու համար: Օրինակ.

գլխի ընկնել-հասկանալ. աչքից ընկնել-հիասթափվել. գլխին տալ-ափսոսել, փոշմանել. հոգին հանել-չարջարել. սիրտ տալ-հանգստացնել, խրախուսել:

Որոշ ուսումնասիրություններ կատարելով հասարակության տարիքային տարբեր շերտերի շրջանում՝ նկատելի է հետևյալ միտումը: Դպրոցականներն ավելի քիչ են կիրառում դարձվածքներ, քան ուսանողները: Սակայն ավելի հաճախ դրանք կիրառվում են մեծահասակների՝ 40-ն անց մարդկանց շրջանում: Այս երևույթն իր բացատրությունն ունի: Տարիքով ավելի հասուն մարդկանց բանավոր խոսքն ավելի հյութեղ և կոլորիտային է, որը չի նկատվում փոքր տարիքի մարդկանց շրջանում:

Այնուամենայնիվ, դարձվածքների կիրառությունը այդ փաստով չի սահմանափակվում, և դրանց գործածությունը ոչ թե պակասում, այլ ընդլայնվում է նոր դարձվածքների առաջացման շնորհիվ:

Դարձվածքներ ստեղծվել և ստեղծվում են առ այսօր՝ լայնորեն կիրառվելով և՛ խոսակցական լեզվում, և՛ գեղարվեստական գրականության մեջ՝ ընդգծելով ժողովրդի ազգային մտածողության, նիստուկացի առանձնահատկությունները:

-
1. Լ. Կ. Եզեկյան «Հայերենի գործառական ոճերը», Երևան, 1999 :
 2. Ս. Ա. Էլոյան «Ժամանակակից հայերենի բառային ոճաբանություն», Երևան, 1989
 3. Ս. Ա Մելքոնյան «Ակնարկներ հայոց լեզվի ոճաբանության», Երևան, 1981
 4. Ա. Ս. Մարգարյան «Հարադրավոր բայերի իմաստա-ոճաբանական արժեքը», Ե., 1965
 5. ՀՍՄՀ ԳԱ Հր. Աճառյանի անվան լեզվի ինստիտուտ «Ժամանակակից հայերեն խոսակցական լեզուն», Երևան, ՀՍՄՀ ԳԱ հրատ., 1981
 6. Ա. Ս. Մարգարյան «Հայերենի քաղիյուսական քարոքությունները», Երևան, 1986